ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռում սուայվեց Անթիլիասի կիլիկյան Աթոռի գահակալի 20 նոյեմբեր 1971 թվակիր «Թուղթ շրջաբերական»-ը, որը մի անգամ ևս գալիս է հաստատելու վերջին տասնհինգ տարիների ընթացքում այդ Աթոռի որդեգրած ոգին ու գործելակերպը հայ եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնության սկզբունքների դեմ:

Մնում է ցավ հայտնել, որ Անթիլիասի Աթոռը մի կողմից ձևացնում է իրեն իբր համերաշխասեր, սակայն փաստորեն գործում է բաժանարար ոգով և միշտ փորձում է հակադրվել ու մրցակից դառնալ Հայաստանյայց եկեղեցու գլուխ Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Մի անգամ ևս հրապարակավ բացահայտվում է, թե ոչինչ չի փոխվել Անթիլիասի ափերին. անգամ նրա չորս ներկայացուցիչների վերջերս ս. Էջմիածին այցելությունից հետո:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

16-ը դեկտեմբերի 1971 թ.,
Ս. Էջմիածին